Գիտություն

ՀՈՒԼԻՍ-
ՕԳՈՍՏՈՍ
№ 7-8
(356)
2021 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման և գիտական կադրերի որակավորման անցկացման վերաբերյալ հարցեր

Սույն թվականի հուլիսի 12-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանի, ԳԱԱ նախագահության անդամների, գիտական կազմակերպությունների տնօրենների և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանի և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանի հետ: Քննարկվեցին գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման և գիտական կադրերի որակավորման անցկացման վերաբերյալ հարցեր:

Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը ներկայացրեց ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 747-L որոշման և ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 935 որոշման հիմնական դրույթները:

Նշվեց, որ գիտաշխատողների աշխատավարձերը բարձրանալու են 2022 թ. հունվարից: Այդ պատճառով գիտական կադրերի որակավորման գործընթացը պետք է ավարտին հասցվի 2021 թ. հոկտեմբերին, որպեսզի պետական բյուջեում կատարվեն համապատասխան փոփոխություններ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն